ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է՝ ՏԵՍՆՈՒՄ ՇԱՒԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 36 կիրակի սեպտեմբերի 25 | հինգերորդ տարի 1894

ՄԻՆԻՍՏՐ Ա. Ս. ԵՐՄՕԼՈՎ.

—

Չընայած, որ Ռուսաստանի քնակչների ամենամեծ մասը երկրագործութեամբ է պարապում և նրա լայնատարած դիրքը, տարածութիւնը կարելի են դարձնում աճեցնել և բուսցնել ամեն տեսակ պտուղ, այնուամենայնիւ մինչև վերջին տարիներս այնքան մեծ ուշադրութիւն չէր դարձնւում երկրագործութեան վրայ, որքան պահանջում էին երկրի պայմանները։

Անցեալ, 893 թւի մարտի 27-ին Ռուսաստանում առաջին անգամ նշանակուեց երկրագործութեան մինիստր։ Այդ փաստը կրկնակի ուրախութիւն պատճառ կը լինի երկրագործին, գիւղատնտեսին և այն ամենքին, որոնք մի երկրի բարօրութիւնը գտնում են նրա տնտեսական կանոնաւոր զարգացման մէջ։ Ասում ենք կրկնակի ուրախութիւն պատճառեց երկրագործութեան մինիստրութիւն հաստատուելը, այն պատճառով, որ հէնց սկզբից այդ հաստատութեան գլուխ կանգնեց մի փորձած, եռանդուն, մանաւանդ՝ Ս. Ս. Երմօլովի։ Նոր մինիստրի անցեալ գործունէութիւնը մարմնացնում տոկունութիւն և սէր է այդ ճիւղի մէջ։ Ինքը լինելով հողատէր, հէնց սկզբից նա այնպէս էր պատրաստւում, որ իրան նւիրի մասնաւորապէս երկրագործութեան, սակայն նրա եռանդը, իր գործին քաջ տեղեակ լինելը և չարունակ իր մասնագիտութեամբ

Երկրագործութեան և պետական կալւածների մինիստր
Ա. Ս. ԵՐՄՕԼՈՎ.

պարապելը՝ պահանջեցին նրանից, որ նա իր գործունէութիւնն աւելի լայն չրջանակի մէջ դնէ և չատ կալւածատէրերի, երկրագործների, գիւղատնտեսների առաջնորդէ և նրանց վիճակն ուղղութիւնը բարւոքէ։

Ա. Ս. Երմօլով 1867 թ. աւարտել է իր ուսումը Ալեքսանդրեան լիցէումում և նոյն տարին մանելով ծառայութիւն պետական կալւածների մինիստրութիւնը՝ միաժամանակ չարունակել է իր կըրթիւնն երկրագործական ինստիտուտում, ուր 1876 թ. աւարտել է ուսումը գիւղատնտեսութեան կանդիդատի աստիճանով։ Հետեւեալ տարին Ս. Երմօլով անցնում է ֆինանսների մինիստրութիւնը՝ առանձին յանձնարարութիւնների պաշտօնով։ 1879 թ. պետական կալւածների մինիստրութիւնն է մտնում, նախ դիրեկտօրի օգնականի և տալ դիրեկտօրի պաշտօնով։ 1892 թ. նշանակւում է ֆինանսների մինիստրի օգնական և 1893 թ. մարտի 27-ին պետական կալւածների և երկրագործութեան մինիստր։

Պ. Երմօլով ունի և գրական աշխատութիւններ։ Եւրոպայում ունի հեղինակութիւն և հռչակ փորձած գիւղատնտեսի։

—

ՕՐԻՈՐԴԸ

(Էդ. Սիէրեկկերից)

—

Մեզ շատ անգամ էր պատմել օրիորդի մասին Հարիւրապետ Բ... Բերանը կըբանար թէ չէ, խօսքը օրիորդի մասին էր։ Սակայն մի բան զարմացնում էր, որ նա դեռ մեզ չէր ներկայացրել նրան։

Ինչ վերաբերում է ինձ, ես նրան պատկերացնում էի այն վառվռուն, աշխոյժ տիկնիկներից (poupées) մէկը, որոնք պճնասէր մօր հոգատարութեամբ կրթուելով վայելուչ ձևերի ու գողտրիկ շարժուածների մէջ, աւելի ուշ հասունանալով՝ մի տեսակ մեծ համարում են ունենում իրանց վրայ։

Մի օր, վերջապէս Հարիւրապետը վճռեց ծանօթացնելու։

Բաւարիա սրճարանում, նախաճաշից յետոյ, սրճի ժամանակ վճռեցինք մի քանի բարեկամներ մի pique nique սարքելու։

Բ... որ Մէցցի էր, բերել տւեց սառցրած փոքրիկ գոճի։

Շատրիանը Սարր Ռունից իր հօր միջոցով կարմրախայտ և կիսավայրերի սև վարազի մի տեսակից յատկապէս տան պատրաստած ապուխտ ստացաւ։ Երկմանը Վօնեզից գերացրած անուշահամ սարեակներ էր ապսպրել։ Նաթանը, Ծերունի Նաթան Զիխէլը, Սարաբուրգից յատուկ այդ օրուայ համար, Հէնրիի մօտ պատւիրած, ուղեղից պատրաստած կարկանդակ էր ստացել։ Մի ուրիշը, որ Մոնսից էր, գերացրած վառիկներ էր բերել տւել։ Իսկ ես, քեռորդուս միջոցով տասը շիշ 1854 թւականի լաւ Ֆօլկշէյմերի գինի էի ստացել։ Ես միայն այսքանս եմ ասում, իսկ դուք երևակայեցէք, թէ ինչ կըլինէր այնտեղ, տասն ընկերներ ուրախ տրամադրութեան ներքոյ, իրանց պողպատէ ատամներով և երկաթէ ստամոքսներով՝ բոլորած այդ տեսակ խորտիկներով հարուստ մի սեղանի շուրջը։

Ես հետս երկու հատ մանկական գրքեր էի բերել, մէկը օրիորդի, իսկ միւսը նրա փոքրիկ քրոջ համար։ Գրքերից մէկն աւելի լուրջ բովանդակութիւն ունէր. միւսն աւելի զուարճալի էր։

Հարիւրապետն աչք ածեց գրքերին ու վերադարձնելով առաջինը՝ աւելացրեց.

—Այս մէկը ո՛չ, այդ շատ տաղտկալի է. խեղճ փոքրիկս առանց այդ էլ տխուր է. իսկ կրտսերին ես խաղալիկ կըտամ։

—Ո՛չ, այդ ես պէտք է տամ, նկատեցի ես։

—Շատ լաւ, պատասխանեց նա, միայն մի պայմանով, որ դուք անձամբ պէտք է տաք ձեր ընծաները։

***

Հարիւրապետ Բ... կեանքի ապահովութեան մի ընկերութեան մէջ տեսուչ էր։ Նա կըլինէր այդ ժամանակը, 1869-ին, մօտ քառասուն տարեկան։ Նրան Հարիւրապետ էին կանչում, որովհետև քսան հինգ տարեկան հասակում, Աֆրիկեան որսորդների Հարիւրապետ և Լէժիօն-դ-Օնօրի ասպետ էր։ Թեթև այրուձիի սպայի մի տիպ էր նա. յաղթանդամ, ջղուտ, հսկայ տեսքով։ Գիարշաւի մէջ առաջինն էր նա։ Պատմում էին, ինչպէս, խոչընդոտներով տեղի ունեցած մի ձիարշաւում, նա բոլորովին մերկ ձիու վրայ նստած մրցանակ էր տարել։ Գալով նրա քաջութեան, այդ մինչև իսկ խելագարութեան էր հասնում։ Նրա զինակիցներից մէկը մեզ պատմեց, կարծեմ Բալակլաւում, նրա կատարած ամենայանդուգն և դժւար գործերից մէկը, որին ինքը ականատես էր եղել։

«Սարսափելի հրացանաձգութեան ներքոյ պատրաստւում էին կռւելու։ Բ...ի վաշտը պէտք է առաջընթաց լիներ։ Սպասում էին նշանի՝ կռիւը սկսելու։ Թշնամու արտիլլերիան արդէն աւերում էր գործում։ Գիանները կրակ կտրել, մարդիկ կատաղել էին։ Մինչ հրամանատարը իր որոտալից ձայնով թնդեցնում էր օդը, Բ... մէջքը գարձրեց թշնամուն և երես առ երես կանգնելով՝ իր մարդկանց սկսեց խրախուսել ու քաջալերելով առաջ վարել նրանց։ Ես երկու մարդ գիտեմ միայն, որ կատարել են միևնոյնը. Միւրատը, որի համար այդ մի մեթոդ էր, և երկրորդ գնդապետ Մարգերիտը», աւելացրեց մեզ պատմող Ծերունի հրամանատարը։

Բացի այդ երկու օրինակելի յատկութիւններից, Բ... մի ուսումնասէր անձն էր։ Ես չըգիտեմ թէ նա ինչ չըգիտէր։ Աշխարհագրութիւն։ Նա այդ ցոյց տւեց գերմանական ամբողջ սպայակոյտին։ Ես ինքս ականատես էի, ինչպես մի գիտնական վիճաբանութեան ժամանակ, նա շշմեցրեց պարոն Տրէսկալին։ Աւելացրէք դրանց և այն, որ Հոմերոսը նա թարգմանում էր ազատօրէն։

Իսկ ինչու, չընայած իր այդ եզական ընդունակութիւններին, թողեց նա այն ասպարէզը, որ նրան այնքան փայլուն ապագայ էր խոստանում։

Աւաղ, յաւիտենական պատմութիւնը.— պարտքերը։

Նրա ինքնասիրութիւնը նոյնքան տարօրինակ էր, որքան և նրա միւս կողմերը։ Նա կենակցում էր մի մատաղ օրիորդի հետ, որին պաշտում էր, սակայն որն աղքատ էր։

Այդ կնոջից նա երկու երեխայ ունեցաւ, երկու հատ պաշտելի աղջիկներ։

Կայսերական թիկնապահների գնդի հարիւրապետ Բ... մի առ ժամանակ դեռ մի կերպ կառավարուում էր, շնորհիւ մատաղ կնոջ աջակցութեան, որ մասնաւոր դասեր էր տալիս։

Նա յոյս ունէր, որ շուտով վաշտապետի աստիճան ստանալով՝ կըփոխադրուի Աֆրիկեան գունդը, ու կեղծ օժիտ ներկայացնելով՝ կը կանոնաւորէ իր տպօրինի դրութիւնը։

Մինչ հարիւրապետի աստիճանը, բանակում արգելւած է ամուսնութիւնը։ Կնոջ յանկարծակի ծանր հիւանդութիւնն արգելք դարձաւ։ Նա հրաւիրեց ամենայայտնի բժիշկներին, ոչինչ չըխնայեց առաւել ևս պարտքի մէջ ընկնելով։ Հետևանքը այն եղաւ, որ նա ստիպւած էր դուրս գալ զինուորական ծառայութիւնից։

Նա տեղ ստացաւ ապահովութեան մի ընկերութեան մէջ, ուր շատ չանցած՝ լաւ դիրք ձեռք բերեց։ Երեք տարի անցնելուց յետոյ, նա այլ ևս չըդիմեց զինուորական առեներին վերականգնելու իր աստիճանը, այլ վերջնականապէս տւեց իր հրաժարականը։

Ա.Հաւասիկ օրիորդի հայրը։

***

Իսկ ինքը, օրիորդը։

Երկար տարիներ անցնելուց յետոյ, ես կասես դարձեալ տեսնում եմ նրան այժմ։ Հազիւ տասնմէկ տարեկան է, խարտեաշ, նազելի դէմքով։ Խոշոր լուրջ աչքերով, կարծես անընդհատ ուզում է հարցաքննել ձեզ։

Ձակատը հօրն է, խելացի. իսկ փոքրիկ, բարութեամբ լի բերանի երկու անկիւններում եղած փոսիկները մի տեսակ խորամանկութիւն են արտայայտում։

Հարիւրապետը ապրում էր Բէլլէվիլում վարձած մի փոքրիկ վիլլայում, որ կոչւում էր Պրեի-Պալէ-Բօյալ։

Երբ մենք հասանք, երկու երեխաներն էլ վազելով փաթաթւեցին հօրը։

Օրիորդի մազերը թափթփած, դեռ հագին էր ուսումնարանի գոգնոցը. իսկ քոյրը՝ Մարգարիտը հագնել էր կոկիկ վայելուչ ձևով։

—Ա.Հաւասիկ այն բարեկամս, որի մասին յաճախ պատմում եմ ձեզ, գրկէք նրան էլ, աւելացրեց Բ...

Օրիորդը ուրախութիւնից շառագունելով, ստացաւ ինձնից գիրքը, ապա համեստութեամբ շնորհակալութիւն յայտնելով՝ ասաց.

—Ուրիշ անգամ էլ հայրիկին այնքան երկար չըպահէք, ինչպէս երէկ։ Ես շատ անհանգիստ էի մինչև նրա գալը։ Ժամի մէկ և կէսն էր, երբ նա եկաւ, ես լսեցի երբ ժամացոյցը խփեց։

—Տասներկու և կէս, սիրելիս, նկատեց հարիւրապետը։

—Ո՛չ, հայրիկ, ժամի մէկ և կէսը։ Դու շփոթւում ես անկասկած, որովհետև տասներկուսից յետոյ, ժամացոյցը միանւագ երեք հարւած է տալիս, նկատեց օրիորդը ժպտալով։

—Վատ մարդիկ շատ կան մեր թաղում, աւելացրեց նա, ես շատ եմ վախենում հայրիկից։ Եթէ մէկը կամ երկուսը լինէր... ամբողջ խմբերով են։

—Լաւ, ես էլ չեմ անիլ, սիրելիս, գրկիր ինձ ու ճաշի համար հոգա։

—Դեռ ո՛չ, տասն րոպէից յետոյ կըլինի։ Ես այսպէս վաղ չէի սպասում ձեզ։ Ուսումնարանից եկայ թէ չէ՝ մայրիկով էի զբաղւած... այստեղ նա կանգ առաւ ու ինձ նայեց։ Նրա դէմքը պատւեց տխրութեամբ։

—Պատմիր, ոչինչ, սա իմ ամենալաւ բարեկամս է, ինչպէս է մայրիկը, հարցրեց հարիւրապետը։

—Այսօր շատ անհանգիստ էր։ Ուսումնարանից գալով՝ փոխեցի նրա ճերմակեղէնը, անկողինը դրստեցի. իսկ այդ ժամանակ խլեց։ Այսօր լւացքի օր է։ Յետոյ աղախնի հետ հաշիւ տ՛ասյ, Մարգարիտին հագցրի, սանրեցի. չէ որ ես էլ ուզում եմ փոքր ինչ ինձ էլ կարգի բերել։

—Գնացէք, սիրելիս, ես կաշխատեմ մինչև ձեր գալը պատւել նրան, ասաց հայրը մի տեսակ յարգանքով։

Օրիորդը շուռ եկաւ ու ուրախ քրքիջով փախաւ։

Մենք ներս մտանք։ Աղախինը ծածկում էր սեղանը։

—Այսօր ինչ ունենք ճաշին, Մարի, հարցրեց հարիւրապետը։

—Օրիորդը արգանակ է պատւիրել, պարոն։ Այսօր ինձ հետ շուկայ էր եկել կէսօրին, այնտեղ օձաձուկ գնեց և ասաց, որ Մատըօտ պատրաս-

տեմ. բայի այդ՝ մի վառիկ ունենք աղցանի ու մաշի հետ։

—Շատ լաւ։

Օրիորդը վերադարձաւ քրոջ պէս կոկիկ հագնուած։

Սեղանը նա էր կառավարում, ինչպէս մի կատարեալ տանտիկին։

Երբ օձաձուկից պատրաստած Մատըլօտը բերեց աղախինը, նա ընտրեց մի լաւ կտոր և տեղից վերկենալով՝ դարձաւ ինձ.

—Դուք կըներէք ինձ, պարոն։

—Մօրդ համար է, հարցրեց Հայրը. ուղարկէր Մարիին։

—Ո՛չ, Հայրիկ, օձաձուկը երկիւղալի է, ես ինքս կըտանեմ։

—Կինս բոլորովին ցնորւած է և կիսով անդամալոյծ, ասաց կամաց ականջիս բարեկամս Բ... Այժմ դուք կըհասկանաք, թէ ինչու մինչև օրս բացի ձեզ ոչ ոք չէ եղել այստեղ։ Այժմ տեսնում էք ինքներդ, թէ ինչպիսի հերոսուհի է օրիորդը։

Երբ օրիորդը վերադարձաւ սեղանատունն, անվեհեր վինուորականը յուզւած նայեց իր արտասուալից աչքերով։

***

Պատերազմը սկսւել էր։ Առաջին անյաջողութիւնից յետոյ, կամաւորների գունդ կազմւեց գընդապետ Մօկկարտի հրամանատարութեամբ։ Բ... և ես բանակ մտաւ իբրև Հարիւրապետ Պուլիզակի գնդում։ Հայրենիքը կարօտ էր իր որդոց օգնութեան։ Այժմ կռւում էին մայրենի սուրբ հողը պաշտպանելու։

Ով որ զէնք բռնել գիտէր, հերթը նրանն էր ուրիշներին էլ օրինակ ցոյց տալու։

Մենք հանդիպեցինք իրար։

Վալէնտինի հրամանատարութեամբ կազմւում էր Ալզասի լէգիոնը, որ յետոյ Ստրասբուրգ պրէֆեկտ գնաց, ինձ էլ տանելով հետը իրան օգնական։

—Ե՞րբ էք մեկնում, հարցրեց Բ...

—Հէնց որ պատրաստ կըլինէք, իսկ դո՞ւք, հարցրի ես։

—Մեր գունդը մեկնում է այս գիշեր։

Մենք գրկեցինք իրար համբուրելով, ինչպէս երկու զինւորներ, որոնք թերևս կրկին այլ և այլ չեն տեսնւելու։

Օրիորդի և քրոջ լքշողութիւնը մի վայրկեան անցաւ մտքովս։

Իսկ չէ որ, ես նոյնպէս երկու վոքրահասակ աղջկերք էի թողնում ինձնից յետոյ։

Այդ այնպիսի վայրկեան է, երբ մարդ ամեն ինչ զոհում է հայրենիքին ասելով.—Ես պատկանում եմ հայրենիքին, արեանս գինը հայրենիքը կըվճարէ իմոնց։

Վրայ հասաւ Սեդանը։

Պուլիզակի գունդը Վինւանի զօրաբաժնի հետ Փարիզ մտաւ։ Վալենտինը մեկնում էր. ես արտիլլերիայում էի ծառայում։

Մի օր Բ...ի տեղապահ Բաժէից մի ազատ կամաւոր նամակ բերեց ինձ։ Մի քանի տող էր միայն։

«Ձեր բարեկամը՝ Հարիւրապետ Բ... սպանւեց։ Նա սարսափելի էր իր անվեհեր քաջութեամբ։ Ես վիրաւորւած եմ։ Ո՛վ գիտէ վաղը ումն է հերթը»։

Ես շտապեցի դէպ Ֆօլի Բէյնօլդ, ուր տարել էին նրա դիակը ազատ կամաւորները։ Ո՜հ. անտանելի էր տեսնել այդ. մարդ յիշելով փոքրիկ երեխաներին՝ վհատում է, հոգւով թուլանում։

Հէնրի Բրիսսօնը, որ Փարիզի շահասէր տեղապահն էր այն ժամանակ, ճաշ խոստաց հերոսի ու նրա հետ միատեղ սպանւած երեք քաջերի վրայ։

Դրւատելով նրանց, նա վառեց բոլոր ներկայ եղողների զգացմունքները։ Ես դեռ այսօր էլ կարծես տեսնում եմ նրա գեղեցիկ շարժւածքները և նրա վերջին խօսքերը լսում եմ, որ դառնալով մեզ գոչեց.

—«Իսկ այժմ, կատարեցէք նոյնը, ընթացէք նոյն շաւղով, գնացէք կռւելու հայրենիքի ազատութեան համար»։

Փարիզի արևելեան մասում լաւ կռւեցին այդ գիշեր։

Սում են, որ Բ...ի ենթասպան, որ մի հարուստ լեհացի էր, մի խոշոր գումար է նւիրել նրա կրտսեր աղջկայ Մարգարիտի ապագան ապահովելու. իսկ նրա վաշտի բժիշկը յանձն է առել մեծ աղջկայ — օրիորդի, պաշտելի օրիորդի խնամակալութիւնը։

Լէժիօն-դ-Օնօյի տունը փակել էր նրանց համար իր դռները. նրանք ապօրինի զաւակներ էին։ Խեղճը չըկարողացաւ նախ քան կռւի բանակ մտնելը՝ կանոնաւորելու իր դրութիւնը։ Օրէնքը արգելում է խելագարի հետ պսակւելը։

Ո՜հ, օրիորդ, որտեղ էք դուք այժմ։ Արդեօք, կարողացած Փարիզի մինօ տաւարից խուսափելու...

Ո՞ւր որ լինէք, եթէ կըկարդաք այս տողերը, մտաբերեցէք ձեր հօր լաւ բարեկամին։

ՄԱՆՈՒՉԱՐ

Մարդակեր վայրենիներ Աւստրալիայում

*
* *

Լռի՛ր, երգ, լռի՛ր, լռել է քնար.
Լռել է վաղուց նրա քաղցր լար։

Քնարի ձայնը, սրտի հառաչանք —
Բոլորը խլացրեց անողորմ տանջանք։

Ի զուր է ծիծաղ. զգում է հոգիս
Մահաբեր շունչը սառը շիրիմիս։

Պէտք չեն արցունքներ. երգչի վառ սիրով
Դու տանչւում էիր, լցած սուրբ կրքով։

Դու կռւում էիր և վերցրիր տանջանք.
Քո գափնէ պսակն է բերանիդ փականք։

ՆՈՐՆՆՑ

ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

—

Մեր նախնիները պարարտութեանց գիւտին նայեցին որպէս մի ամենակարևոր նիւթի վրայ, այնպէս որ ետքն կռնոսին վերագրեցին։

ՄԱԿՐՈԲ

—

Նա՝ որ մի թոռո գնեաց աեղում երկուսը լուսցրեց, արժանապատիւ իր հայրենիքի երախտապիտութեանը։

ՊԼՈՒՏՈՆ

—

Հողագործութեան մէջ եղած մի առաջադիմութիւնը համապատասխանում է ուրիշ ճարտարութեանց մէջ եղած առաջադիմութեան տանին։

ԴԻՒՊԻՆ

Առանց բացառութեան՝ ամեն հողագործի նշանաբանը այս պէտք է՝ լինի հողից առնուածը հողին դարձնել, կամ հողին տալ այն բանը, որ հողից պակսում է։ Հողագործը որ երկրի մէջ էլ լինի, ինչ հողի վրայ էլ աշխատի, ինչ մշակական ճրութեան էլ որ հետևի, այս սկզբունքով կարող է հողի բերրիութեան վիճակը պահպանել և կանոնաւոր և առատ բերք՝ը ստանալն ապահովել։ Մեր հայրերի և պապերի անդրջրհեղեղեան հողագործական աշխատութիւններն են որ տակաւին շարունակում ենք և անդրանիկ մարդի գործած հողի վրայ արմաիքներ ենք ցանում ու քաղում, ծառեր տնկում և հանում, անտառներ կտրատում և այս բոլորը՝ մեր պահանջներին գոհացում տալու համար։

Մարդկանց անհաշիւ արտադրութիւնների առջև եթէ հողը գետ անգամ լինէր՝ կը չորանար, ծով անգամ լինէր՝ կը ցամաքէր, մի՛թէ աննդարար տարրերի շտեմարանը չէր դարդակիլ. արդէն շատ տեղերի հողերը չեն պսակում հողագործի գեղեցիկ յոյսերը, շատ տեղերի հողերն էլ մինչև անգամ չեն վարձատրում մշակողի աշխատութիւնը։

Անհուն և անսահման ժամանակի առաջ մի դարը մի ակնթարթային րոպէ է. ներկայ ժամանակամիջոցում արդիւնաբերութիւնների նւազելն արդէն զգալի է. հարիւրամեայ պառաւը այս ինչ արտի բերքի տատնապատիկ նւազելն է պատմում, ծերուկ գեղջուկը զարմանում է թէ երբեմն առանց աղբի առատ առատ քաղում էին, մինչդեռ այսօր աղբելով, հազիւ մի քիչ քաղում բան են հընձում։ Մի դար՝ երբ այսքան փոփոխութիւններ է բերում հողագործութեան վրայ, ապա դարերն ինչ փոփոխութիւններ չըպէտք է բերեն։ Զօրեղ և անդիմադրելի ոյժերը անբերրիութեան նպաստում են հզօրագոյն մրցումով. կարծէք թէ բաւական չեն առօրեայ անձրևների, հեղեղների մի՛լիոնաւոր արժողութեամբ հողի աննդարար տարրերը՝ գետերի և վազուն ջրերի միջոցով դէպի ծով տանելը, կարծես բաւական չեն հողի իրաւունքներից ճարտարութիւնների յափշտակածները, կարծէք բաւական չեն բարեպաշտութեան շնորհիւ գերեզմանների մէջ ամեն օր դիզած և անգործութեան դատապարտած աննդարար տարրերը, կարծէք բաւական չեն պետութիւնից ամեն օր արտագրուած նիւթերը, տակաւին հողագործ ժողովուրդը մրցակից է լինում և նպաստում է անբերրիութիւնների պատճառներին։

Մեր գիւղերի աղբանոցներից աղբի լճակներ ու վտակներ են գոյանում անձրևների ժամանակ, փուած աղբանոցների աղբն հեղեղները լւանում, տկարացնում և քշում, տանում են դէպի ծով, դէպի անգործունէութիւն,– որը հողագործի գրամագլուխը և հողի հոգին է։

Շատ գիւղերի մէջ էլ անտառներ չըլինելով, վառելանիւթ չըգտնելով, գեղջուկը ստիպւած է կենդանիների աթոռն ու աղբը վառել, մտքից չանցնելով՝ որ այդպիսով ամենակարևոր նիւթերը և հողի անհրաժեշտ տարրերն ի զուր փչացնում է։ Այսպէս ուրեմն, օր ըստ օրէ սպառման քանակութիւնն աւելանում է, հողի ոյժը պակսում է և կորուստների տեղը երբէք չեն լցւում։

Ինչպէս մեքենան կը դադարէ, երբ կրակը հանգչէ, ինչպէս ճրագը կը հանգչէ, երբ իւղը հատնի և ինչպէս կենդանին կը սատկէ, երբ կերը

սպառւի, այնպէս էլ հողը սկարանում է, ամրանում և անբերրիանում, երբ իր պարունակած սննդարար տարրերը սպառւում են։

Հողն էլ ճիշտ մեքենաների նման անհուն մի մեքենայ է, որ զանազան սերմերի միջնորդութեամբ իր մէջ պարունակած տարրերը բուսականութեան է փոխում։

Կովկասեան անբերրիութեան նպաստող գլխաւոր պայմաններն են՝ աղբերի անկանոն փչացնելը, քիմիական պարարտութեանց չգործածելը և այս էական տարրերի կարևորութեանց մասին ժողովրդի անգիտակցութիւնը։ Աղբերի հարցը եթէ լրագրութեան մէջ երբեմն երբեմն արծարծւի, դարձեալ քաղաքի սահմաններից դուրս չի գալ, որովհետև մեր գիւղացին տակաւին չի հետաքրքրւում լրագրութիւնով, և խօսելով, լսելով, մանաւանդ տեսնելով՝ նա աւելի կըհամոզւի, քան կարդալով։ Ի՞նչ բան կարող է աւելի հեշտ համոզել գիւղացուն, քան ըրջուն գիւղատնտես-ուսուցիչները, որոնք գաւառից գաւառ, գիւղերից գիւղ ըրջելով՝ հողագործական դասերով հասկացնեն նրանց աղբերի և պարարտութիւնների օգտակարութիւնը, նրանց տրւելիք խնամքները և գործունէութիւնների եղանակը և այլն։

Շատ հողեր կան, որ անբերրի են դարձել ֆոսֆարական թթւի պակասութեան պատճառով, մի այնպիսի տարրի պատճառով, որի բուն հայրենիքը ընդարձակ Ռուսիան է։ Վոլգայի և Ինէպրի միջով անբաւ տարածութեամբ ահագին գօտի է տարածւում, որ իր մէջ պարունակում է այնքան առատ քանակութեամբ ֆոսֆարական թթու պարունակող հանքաքարեր, որոնք մինչև անգամ գործ են ածում Վօրոնէժում և Տամբովում շինութիւնների համար։ Ինչպէս տեսնւում է, այս հանքաքարերը, ոչ միայն կարող են բաւել երկար դարեր տեղական հողագործութեան, այլ և համաշխարհային հողագործութեան։ Նաւարկելի գետեր ու ծովեր և երկաթուղիներ շատ կան այս պարարտութեանց փոխադրութեան համար։

Գիւղացուն քարոզել, դասախօսել, ֆոսֆարային քարահանքերը ձրիաբար նրա տրամադրութեան տակ դնել, բաւական չեն նրան համոզելու։ գիւղացին դժւարահաւատ է, բայց երբ մի անգամ հաւատայ, լաւ կըպահպանէ և կըգործադրէ։

Համալսարանականների խօսքերից, պլօֆեսօրների դասերից, գիտնականների գրւածներից աւելի ինքն իր աչքերին է հաւատում գիւղացին, նրա համար մի անգամ տեսնել՝ տասն լսել, հարիւր կարդալ արժէ։

Շրջուն գիւղատնտես-ուսուցիչների խօսքը փորձառական դաշտերի վրայ տպացուցանելով, միայն պէտք է համոզէ մեզ թէ գիւղացին լսեց, տեսաւ, համոզւեցաւ և կըգործադրէ այնուհետև գիտութեան պատւէրները։

Երկրագործութեան և պետ. կալւածների մինիստրը, որ համազգային գիտութեանց մէջ էլ խոհուն գիտնականի համբաւ է վայելում Եւրոպայում՝ իր զանազան ուսումնասիրութիւններով և գրւածներով, ի միջի այլոց ֆոսֆարային հանքաքարերի մասին արած անալիզներով, այժմս այցելելով մեր երկիրը, յոյս ունինք որ ներկայ հողագործական վիճակի մէջ անշուշտ բարեփոխութիւններ կը մտցնէ և երկրի առաջադիմութեան և բարւօքման զարկ կըտայ իր խորհուրդներով։

ԻՇԽԱՆ-ՔՆՆԻԿ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ

—

«ՀԱՆԴԷՍ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ», գիրք Ե, Մոսկւա 1891 թ.

—

«Հանդէսի» վերաբերմամբ մեր պարտքը վերջացրած չէինք լինիլ, եթէ բոլորովին առանց ուշադրութեան թողնէինք հրատարակիչ Բարխուդարեանի գրած «Անվեհեր ասպետութիւն» անունով յօդւածը։ Մոսկւայի նորակոչ հրապարակախօսը այդ յօդւածի մէջ պարզում է իր «լուսաւոր հայեացքները» և դրանով ցոյց է տալիս թէ ինչ տեսակ գրական և հրատարակչական ընդունակութիւնների տէր է։

Ցաւանի է որ ներկայ տարւայ սպրիլ ամսի սկզբում «Մշակի» մէջ տըպւեց Տ. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի մի յօդւածը «Ո՞վ հաւատաց» վերնագրով։ Յօդւածի էական միտքն էր այն, որ տգէտ քահանաները չը պէտք է լինին։ Եւ այս միտքը հեղինակը արտայայտում էր «Արարատի» մէջ տպած Արշէն Երէցի մի քարոզի առիթով։—Իւրաքանչիւր ընթերցող, որ տարիների ընթացքում հետևել է մեր մամուլին, գիտէ որ այդ միտքը մի նորութիւն չէ մեզ համար, ընդհակառակն, եթէ կայ մեր մէջ մի հարց, որի մասին շատ և չափազանց շատ խօսւել է, դա տգէտ և անարժան հոգևորականութեան հարցն է։ Նա սկիզբն է առել հէնց այն օրից, երբ գրականութիւնը դարձել է աշխարհական մարդկանց սեպհականութիւն, երբ իւրաքանչիւր մտածող մարդ քիչ թէ շատ քննատաբար է նայել իր չուրջը։ Մեր մամուլի մէջ

այդ մասին ահագին նիւթ կայ դիզած։ «Հիւսիսափայլը» անողորմ կիրակով հարւածում էր տգէտ հոգևորականութիւնը, մի աննկարագրելի սարսափ պատճառելով այն ժամանակւայ հայ տիրացումիտ դրագէտներին։ Գամառ-Քաթիպան, որի «սուրբ չիրմի» վրայ փարիսեցիական եռանդով կուրծք է ծեծում «Հանդէս» տպող Բարխուդարեանը և համբոյրներ է թափում իր աշխատակիցների բերանով, շատ կծու բաներ ունի գրած այդպիսի հոգևորականութեան դէմ (տեսէք «Դև-Մրուս», «Տէր-Մինաս», «Սատանայի Օջիլ» և այլն)։ Անգամ Տաճկաստանի խուլ անկիւններից մեկում, Մուշի ս. Կարապետ վանքում հրատարակւող «Արծիւիկ Տարօնոյ» թերթում դեռ 1860-ական թւականների սկզբին յայտնւում էին այնպիսի մտքեր տգէտ հոգևորականութեան մասին, որոնք այժմ էլ կարող էին սարսափ ազդել պահպանողականներին, եթէ սրանք քաջութիւն ունենալին կարդալ այն կծու, խիստ տողերը։ Հայաստանի աւերակ դրութիւնը այդ թերթը համարում էր անարժան հոգևորականութեան գործ։ Այդ հոգևորականութիւնն էր (և է) որ կեղեքում էր ժողովուրդը, տաճկական փաչաների բռնութիւններն էր դործ դնում։

Մի խօսքով, խօսել են այդ մասին ամեն ժամանակ և շատ ու շատ մարդիկ։ «Ո՞վ հաւատաց» յօդւածը անթիւ սրտունջների մի պարզ կըրկնութիւն կըլինէր և գուցէ ուշադրութիւն չըդրաւէր, եթէ չըկրէր Տ. Արիստակէս Սեդրակեանի սոսրագրութիւնը։

Տ. Արիստակէսը մեղաւոր է համարւում Մոսկւայի պուրլիցիստի առաջ այն պատճառով, որ նա իր յօդւածը տպագրել է ոչ թէ «Արարատի» մէջ, այլ «Մշակի» մէջ. ուստի նա սրբազան հեղինակին մի քանի տեղ անւանում է «Մշակի» արժանաւոր աշխատակից (խնդճ «Մշակ», ինչ կը լինի քո ճարը, քանի որ Մոսկւայի «Հանդէս» տպողը քեզ չէ հաւանում)։ Եւ մենք կարծում ենք որ չատ հասարակ միտք յայտնած կըլինինք, եթէ ասենք որ իւրաքանչիւր մարդ մաքի և խղճի ազատութեան սեպհականատէր է, նա կարող է և պիտի ունենայ իր համակրանքն ու հակակրանքը, իր աշխարհայեցողութիւնը, իսկ պանդան «սրտադէտներ», որոնց նախատիպերը բոյն դրած են Մոսկւայի Սարսանոյ բուլւարում, ոչ մի ժամանակ չեն կարողացել և չըպիտի երբէք կարողանան մարդկանց մտքի ու համոզմունքի տերը դառնալ։ Գրական մի յօդւած քննել կատարեալ իրաւունք ունի ամեն մի մարդ, որ իրան ձեռնհաս է համարում դատել յօդւածի նիւթի մասին։ Այդպէս չէ, եթէ այդպէս չէ, ապա ինչ իրաւունքով տեղակալութեան իրաւունքների մասին ծագած բանակռւի ժամանակ ակնհեղեակական նւիրապետութեան, աստւածարանական վերացական հասկացողութիւնների մասին խօսում և վճիռներ էր կայացնում մի մարդ, որի համար հայոց լեզուն մի կատարեալ terra incognita էր։ Եւ երբ այդքան ազատամիտ էք ձեանում հասարակական և եկեղեցական հարցերի վերաբերմամբ՝ ձեր կողմնակիցներին նոյն իսկ ոչ ձեռնհաս մարդկանց լայն ասպարէզ տալով, ապա ինչ իրաւունքով էք դոռդոռում երբ քահանայական հարցի մասին խօսում է մի եպիսկոպոս, որ երկար ժամանակ կառավարելով մեր թեմերը, ուսումնասիրել է գործը, ունի իր ձեռքին փաստեր և ապացոյցներ։ Ով և լինի դիւղական քահանայի քարոզի հեղինակը, բայց քանի որ այդ քարոզը պաշտօնական կարգադրութիւն չէ և ոչ իսկ պաշտօնական չրջաններից դուրս եկած մի լուր չէ սպասւող այս ինչ կարգադրութեան մասին, այլ լոկ մի գլուխիւն է յայտնի հարցի մասին, մի վրայ է, որ իրը թէ պիտի պարզէ տարիներով հասունացած, մեծացած և լուծուած պահանջող խնդիրը, ամեն մարդ իրաւունք ունի խօսել այդ մասին, յայտնել իր կարծիքը, առաջ բերել իր իմացածը։ Այսպէս է հասկացւում մամուլի դերը մի որ և է խնդիր մշակելու մէջ։ Եւ Արիստակէս եպիսկոպոսը, դործս դրելով տպագրական խօսքի ազատ իրաւունքը, չէ մեղանչել գրական էտիկայի, ընդունւած կանոնների դէմ։

Գոնէ պ. Բարխուդարեանը, որ ուղում է ազատամիտ ձեանալ, պիտի հասկանայ որ գրական հրապարակում խօսելու իրաւունքը դեռ ազատ է, չի կարող և չըպիտի խլւի անհատներից, քանի որ գրականութեան չահերը չեն թոյլ տալիս որ և է մենաչնորհում, որ և է սահմանափակումն։—Բայց նա, այդ անհեթեթութիւնը պաշտպանելով, միևնոյն ժամանակ կամենում է ցոյց տալ որ ինքն էլ, այո, չատ է ուղում որ հայ հոգևորականութիւնը լինի հասկացող, զարգացած և իրըև տպագոյց գծի տակ դնում է Մոսկւայի քահանաների վէճերի պատմութիւնը, որ կարծես արտադրած է մի տիրացւի յուշատետրից։ Նա վրդովւած է արձանագրում այն փաստը, որ քահանաները Մաշտոցի բոլոր կանոնները չեն կատարում։ Ահա հայ եկեղեցասէրի հառաչանքը. «Այս տարի աւադ քահանայ Տէր-Ղուկասեանցը նրան (այսինքն Յովսէփեանց քահանային) չէ ընդունում տուն օրհնելու, ինքն էլ չէ դնում։ Տեղի են ունենում եկեղեցում օտարամուտ սովորութիւններ և ըստ կամաց մեր քահանաների վերացւում են Հայաստանեայց եկեղեցու ծէսերը։ Նարօտ կապելն այստեղ կախումն ունի մօդայից և ոչ Մաշտոցից, մինչև անգամ կամեցողին այնպէս են նայում, կարծես թէ մի արտասովոր բան լինի խնդրածը։ Կօչիկներով սեղան բարձրանալը մեր քահանաների համար ոչինչ բան է, պատարագի արարողութեան ժամանակ փոդր ձեռին բռնած (?) սեղան են բարձրանում սուրբ խորհուրդը կատարելու։ Ականատես եղանք անձամբ սոյն տարի աւադ չաբաթ օրը, ինչպէս աւադ ք. Տէր-Ղուկասեանց և հ. Պապովեանը ժամասացութիւնից առաջ և յետոյ կօչիկներով ատեանում կանդնած հաղորդում էին։ Մինչ սարկաւագը բարձր ձայնով հրաւիրում է «երկիւղիւ և հաւատով» յառաջ մատչել հաղորդւելու, մեր քահանաները, հակառակ մեր եկեղեցու սահմանած կարգապահութեան, անպատկառ կերպով կօչիկներով կանգնած ատեանում՝ հաղորդութիւն են տալիս, փոխանակ սեղանի վրայ երկիւղածութեամբ ծունկ խոնարհելու» (եր. 363—364)։

Մենք կարող ենք այժմ ասել որ ահա այսպէս է հասկանում պ. Բարխուդարեանը եկեղեցական դասի բարեկարգութիւնը։—Անչուչա Մոսկւայի

քահանաները «անպատկառ» ածականը չէին ստանալ իրանց պուբլիցիստի բերանից, եթէ բեմի վրայ հագած ունենային ոչ թէ կօշիկներ (հասկացւում է մեր ամենքիս հագած կօշիկը, որ եւրոպական է կոչւում), այլ հողմափուր։ Ինչ զանազանութիւն կայ այդ երկու տեսակ ոտնամանների մէջ. այդ, ի հարկէ, քաջ յայտնի է վրդովւած պարոնին։ Մենք, կարկկցելով նրա ցաւին, ալիտի յիշեցնենք նրան և այն, որ մեր քահանաները, այո, նորաձեւութեան աստիճ հետեւում են։ Այժմ քահանան, նոյն իսկ, յետ ընկած գիւղերում, կրում է եւրոպական գլխարկ, և բոլորովին կորել, անհետացել է հայ տէրտէրի աւանդական մորթէ տհագին գդակը. քահանան այժմ կարճ խուզում է իր մազերը, մինչդեռ հայ տէրտէրի մազերը երկար պիտի լինէին, ուսերի վրայ թաււած։ Ո՞ւր է տէրտէրի սև կտաւի բաճկոնը, ո՞ւր է նրա մեծ ու հաստ գաւազանը, ձեռքի երկար տէրողորմեան։ Այժմեան հայ քահանայի չալիկի սպիտակ, օալարած օձիքը հեռու տեղից է աչքի ընկնում։—Աչքի անցկացրէք եկեղեցական սահմանադրութիւնը, մի՞թէ այս կարգերը թոյլատրւում են Հայաստանեայց եկեղեցու հարազատ սպասաւորներին։—Պ. Բարխուդարեանն իրաւունք ունի պահանջել, որ քահանան հողաթափ հագնէ, այդ իր գործն է։ Բայց նա, իբրև հրապարակախօս, իրաւունք չունի այն աստիճան միամիտ լինել, կարծելով թէ չորերի և ծէսերի վրայ է հիմնւած եկեղեցական դասի բարեկարգութեան հարցը։

Ի հարկէ, «Հանդէսի» տիրոջ և նրա նմանների համար պատրաստ է պատասխանը մեր այս խօսքերի դէմ. ամենայն հեշտութեամբ կարող է նա ասել որ մենք անկրօն ենք, եկեղեցի քանդող և այլն։ Բաղ ուրեմն խօսէ այն մարդը, որի հեղինակութիւնը ընդունում է ինքը, պ. Բարխուդարեանը։ Այդ մարդը հանգուցեալ Սահփաննոս Նազարեանցն է, որի մի ձեռագիր գրւածքը հրճանքով տպագրել է «Հանդէսը»։ Դեռ երեխայ էինք, երբ կարդում էինք Նազարեանցի այս տողերը. «Այսօր տեսնում ենք մեր աչքի առաջև մի ամենևին մեքենական քրիստոնէութիւն հայերի մէջ, ուր ոչինչ կրօնական ուսումն և դաստիարակութիւն չըկայ, և եղածը ևս այնպէս է, որ բացի մի չոր և անհոգի դաւանաբանութիւնից ոչինչ բովանդակում չէ իր մէջ։ Ինչ կասէր ձեզ հանդուցեալը, պ. Բարխուդարեան, եթէ վեր կենար գերեզմանից և տեսնէր իր տպագրական մտմտուքը ձեր ձեռքին։ Պահանջելով հասկացող և զարգացած հոգևորականութիւն, մենք ունինք բոլորովին այլ հասկացողութիւն։ Մենք դաւանում ենք որ «մեքենական քրիստոնէութիւնը» չէ հայոց եկեղեցու վերջնական նպատակը. մենք ընդունում ենք որ եկեղեցու սպասաւորը պիտի տարածէ կրթութիւն, պիտի նպաստէ հային առաջ գնալ, լուսաւորւել ճշմարիտ գիտութեան առաջնորդութեամբ, վերանորոգւել հոգեպէս, հանել ասիական տգիտութեան չապիկը, դէն դնել նախապաշարմունքները—եթէ դեռ չէք հասկանում թէ ինչ ենք ասում, քրքրեցէք «Հիւսիսոփայլը»։ այնտեղ կը տեսնէք թէ ինչ են պահանջում հոգևորականութիւնից։

Մենք չարունակենք։ Արիստակէս եպիսկոպոսին մեղադրում են այն պատճառով, որ նա անարժան հոգեւորականութեան գոյութիւնը ամբողջովին վերագրում է հոգևոր իշխանութեան, մինչդեռ սա հոգևորական կոչումն է տալիս միայն ժողովրդի ընտրածներին, հետևաբար և ժողովուրդն էլ իր մեծ մասն ունի այդ դործի մէջ։—Ենթադրենք անգամ թէ այդպէս է, թէև հաստատ հիմք չը կայ պնդելու, որ հեղինակը միանգամայն ազատ է համարում ժողովուրդը պատասխանատուութիւնից։—Ինչ է դուրս գալիս դրանից։ Հոգևոր իշխանութիւնը, ուրեմն լոկ կամակատար է հանդիսանում։ Բայց հարցնում ենք. եթէ ժողովրդի կամքն է միմիայն դեկավարում, ինչու՞ նա վճռական նշանակութիւն չունի և այն դէպքում, երբ հարկաւոր է պաշտօնից հեռացնել անարժան հոգևորականին։ Շատ անգամ է պատահում որ ընտրողը խնդրում, աղաչում է ազատել իրան իր ընտրածից, որի գործերը հաճելի չեն իրան, ընտրողին, բայց իշխանութիւնը իրան պարտաւոր չէ համարում կատարել այդ պահանջը և շատ ու շատ են այն դէպքերը, երբ մի դիւղը, մի համայնքը տարիներով դիմադրում է իր չուզեցած քահանային, գժտութիւններ և խռովութիւններ անպակաս են լինում, իսկ չըսիրւած քահանան մնում է իր տեղը։ Պարզ է ուրեմն, որ իրաւունքը բացառապէս ժողովրդինը չէ, որ հոգևոր իշխանութիւնն էլ ունի իր մեծ իրաւունքները, իր պահանջները, որոնց կատարելով միայն կարելի է օգտւել ընտրողական իրաւունքից։—Արդ, ոչ ոքի համար գաղտնիք չէ թէ ինչպէս են մեծ մասամբ կազմւում ընտրողական թերթերը, յայտնի է մանաւանդ, որ ժողովրդի ցանկութիւնը ոչինչ է առանց տեղային հոգևոր դասի և հոգևոր իշխանութեան հաճութեան, որ ձեռք է բերւում առատ «ջահամբոյրներով»։ Ինչպէս պէտք է արդարութեան պահանջը կատարել—պէտք է կանոնաւորել ընտրութեան գործը. պէտք է նշանակել յայտնի պայմաններ հոգևոր կոչումը ընդունելու համար, պէտք է—ամենագլխաւորը—ընդունել սկզբունքով թէ մրն է լաւը, տգէտը թէ հասկացողը։—Հոգևոր իշխանութիւնն ինքն է ընդունում, որ ժողովրդին իր հոգևոր չահերի կարևորութիւնը, հետևաբար և ընտրելիների պատրաստականութիւնը մի որոշ աստիճանով պարզելը իր պարտականութիւնն է, ուստի և ունի թեմական դպրոցներ, կամենում է բանալ ընծայարաններ, ուր մարդիկ պիտի պատրաստւեն հոգևոր կոչման համար։ Ուրեմն էլ ինչու՞ են այդ աղմուկները, երբ նոյն իսկ այդ դպրոցների գոյութիւնը հաստատում է որ հոգևոր իշխանութիւնը խոստովանում է որ ինքը մի կոյր գործիք չէ, որ ժողովրդին հարկաւոր են լաւ հոգևորականներ։ Եթէ կարողանայինք արդարանալ միայն նրանով, թէ մեր ինչ գործն է, ժողովուրդն ընտրեց, մենք էլ ձեռնադրեցինք, մեղը մերը չէ, էլ ինչու՞ ենք քննում տիրացուներին, ինչու՞ ենք ուզում իմանալ թէ նրանց մտաւոր պաշարը որքան հարուստ է։ Եթէ նոյն իսկ այս քննութիւնը կատարւէր բարեխիղճ կերպով, հասկացող մարդկանց առաջ, այսօր հարիւրաւոր գիւղեր չէին ունենալ անդրագէտ քահանաններ։ Ինքնախաբութիւնից ինչ օգուտ ունինք։ Մեզ յայտնի է, որ գիւղական ժողովուրդը պիտի ունենայ այնպիսի հո-

գևոր պաշտօնեաներ, որոնք իրանց զարգացմամբ մի աստիճան բարձր են իրանց շրջապատողներից. արդ, ինչպէս պիտի սպասենք որ գիւղացին ինքն իմանայ թէ ով է այդպիսի յատկութեան տէր. Չէ որ արդ պէտքում ձեռնհաս իշխանութիւնը պիտի ունենայ իր կանոնը։ Բայց մեր է նա,—

Հոգևոր իշխանութիւնն իր առջևը դրած այդ ծանր ու բարդ հարցը վարժում է լուծել ընծայարանների վամ միրացարանների միջոցով, որոնք պիտի բացէին գլխաւորապէս մեր հին վանքերի մօտ։ Դա մի հնութիւն է, վաղուց յղացած, բայց անգործադրելի մնացած միտք է։ Արիստակէս Լաստիվերտցին իր յօդուածում չօչափել է և վանական հնութիւնը ընծայարանների հարցը ևս անհնարին կարծիք է յայտնել։ Պ. Խարխուրդեանցն վրդովել է և այդ բանը, ուստի քացախութիւն է պահանջում թէ «ինչու վանքերը ներկայումս կամ ապագայում չեն կարող ընծայարաններ ունենալ»։ Ապա ինքը պատասխանում է իր հարցին։ «Ամենքը գիտեն, ասում է, որ անցեալում վանքերը մեծ դեր են կատարել մեր մտաւոր կեանքում»։ Այդ ճշմարիտ է. և ոչինչ կարող էլ չէր կարող լինել։ Անցեալում հնարաւոր էր միայն նեղ կրօնական կրթութիւն, ուստի նա բացառապէս գտնւում էր հոգևորականութեան ձեռքում։ Վանքը կազմում էր ժողովրդից առացած սջագին եկամուտներ, հարուստ հայր, վայելածատէր իշխանը մեծ նիւթական ապրուստ էին անում. հոգևորականութիւնն ապրում էր վանքերում, ժամանակի ոգին այնպէս էր որ թագաւորներն ու թագուհիները թողնում էին իրանց գահերը և վանք էին քաշւում ճգնելու համար։ Կրօնական դարը ուրիշ պահանջ չունէր, ուրիշ կերպ չէր հասկանում հոգու փրկութիւն։ Բայց անցել են այդ ժամանակները, այժմ այլ ևս վանքը չէ կարող կատարել իր նախկին դերը։ Նա հեռու է մնացել մեծ կենարօններից, մոռացել է, քայքայել։ Մեր հոգևորականութեան նիւթական անապահով դրութիւնը չի գրաւում նոյն իսկ մեծ քաղաքներում, նոյն իսկ Էջմիածնում զարգացման մարդկանց դէպի հոգևոր կոչումը. ուր մնաց աղքատ, ամեն յարմարութիւնից զուրկ վանքը։ «Տարաբախտաբար, ասում է «Հանդէսի» տէրը, Ռուսաստանում վանքերի դրութիւնը համեմատաբար աննախանձելի է (այդքան միայն), բայց չենք կարծում, որ անհնարին լինի նոցա վերականգնել»։ Այսպէս ասողը պէտք է միանգամայն միամիտ լինի, միանգամայն անտեղեակ մեր վանքերի այժմեան դրութեան։ Վերականգնել, այո, բայց ինչպէս, ինչ հրաշքով։ Դրա համար ահագին աշխատութիւններ են պահանջւում։ Նախ և առաջ պէտք է վերացնել գոյութիւն ունեցող սիստեմը, յափշտակութիւնների սիստեմը. պէտք է մտցնել կառավարութեան մի այնպիսի ձև, որ անհնարին դարձնէ այնքան լայն չափերով գործադրուղ որովայնամոլութիւնը, չհասիրութիւնը յօգուտ անձնական դրսևոնի։ Ապա կանոնաւորել վանքերի եկամուտների աղբիւրները, վերանորոգել կիսաքանդ վանքերը, կառուցանել նոր և յարմար բնակարաններ միաբանութեան և դպրոցի համար, հետացնել բազմաթիւ անյարմարութիւններից պմենագլխաւորները, հաստատել ընծայարանների համար ուսուցչական կազմակերպութիւն և նրա վրայ հսկող մարմին։ Մի խօսքով, պէտք է կենդանութիւն տալ աւերակին, ստեղծել նրա վրայ մի նոր, մեծ գործ։ Հարցնում ենք՝ ուր են միջոցները, որտեղից են այն միաբանները, որոնք կարող կըլինեն հասկանալ ուսման նշանակութիւնը։ Անդրկովկասում ապրող մի միլիոնանոց հայ ժողովուրդը չէ կարողանում պահպանել իր թեմական դպրոցները, երեք հատ են դրանք և դրանցից երկուսը (Նշհանի և Շուշու) դադարում են մաշեցնող աղքատութեան ճանգերում։ Փոխանակ նոր հիմնարկութիւնների հասնից ընկնելու, աւելի լաւ չէ արդեն միջոց ձեռք առնել եղածները բարեկարգ և ապահով դրութեան մէջ դնելու համար։ Այն, ինչ որ այժմ ապաստում են վանական ընծայարաններից, կարող են և պիտի տան մեր թեմական դպրոցները, ինչ միտք կայ սար ու ձոր ընկնել։

Այս հարցը չատ են լսել «Հանդէսի» դաւանակից հրատարակախօսները և սրանց պատասխանն այն է եղել թէ թեմական դպրոցները չեն համապատասխանում իրանց կոչման, թէ նրանք աւելի աշխարհական դպրոցներ են, քան հոգևոր. ամիսների ընթացքում Թիֆլիսի պահպանողականները բղաւում են թէ պէտք է թեմական դպրոցները դարձնել զուտ հոգևոր, կրօնական հաստատութիւններ։ Բայց պ. Բարխուդարեանը ուրիշ կերպ է հասկանում թեմական դպրոցների անյարմարութիւնը, նա ասում է թէ թեմական դպրոցները եթէ կամենան ընծայարանների դերը կատարել, պիտի իրանց սանների ընդ վզերական ոգով կրթել ու մեծացնել։ Եւ այդ եղանակը նա ցանկալի չէ համարում։ «Մտցնել այնպիսի ուղղութիւն, որ աշակերտները միայն հոգևոր կոչման պատրաստ լինին, ցանկալի չէ զանազան պատճառներով»։

Ահա այսպիսի մտաւոր քաոս է տիրում այն բանակի մէջ, որ իրան համարում է եկեղեցու պաշտպան։ Հաստատ համոզմունքի, որոշ ծրագրի կատարեալ բացակայութիւն—միայն այդ չէ ցաւը։ Այնքան յափշտակող յատկութիւն ունի այդ դրութիւնը, որ նոյն իսկ գրական մի այնպիսի խեղճութիւն, որպիսին է ասուլի նման երևան եկող «Հանդէսը», հարկաւոր է համարել զարդարել իր մոխրագոյն էջերը «Անվեհեր ասպետութիւն» ապեղծվեղ յօդուածով։

ՀԱՒԱՏԱՒՈՒՆ

ՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿՏԱԿ

I

Այս շաբաթ „Новое Обозрѣніе“ լրագրում կարդացինք մի հեռագիր, որ շատ խրատական է այն հայերի համար, որոնք բարեգործների հոչակ վաստակելու փափագ ունեն։ Ահա այդ հեռագիրը, որ գրւած է Թեյլաքաղաքից սեպտեմբերի 19-ին. «Իշխան Մելիքսեդեկ Գէօրգեւիչ Ճաւճաւաձէն թողել է հետևեալ գրաւոր կտակը.—Ինձ կըթաղէք որքան կարելի է հասարակ, ինչպէս թաղում են մի ամենաաղքատ գիւղացուն։ Թող իմ թաղմանը ոչ ոք ներկայ չըլինի։ Իսկ

թաղման համար անելիք ծախքի գումարը կընդհրեք վրաց գրականական ֆոնդի օգտին»։

Որքան իրատական և որքան սրտառուչ կտակ։ Կովկասի մի յետ ընկած անկիւնում մեռնում է մի ոչ հարուստ վրացի իշխան և իր մահճան բոլորին յիշում է իր մայրենի գրականութիւնը և նրա աշխատաւորներին։ Հայերը, որ գիտեն պարծենալ իրանց բարեգործութեամբ, հայերը, որ այս կողմից միշտ ծաղրով են խօսում վրացիների մասին, կարող են արդեօք իրանց անթիւ կտակների շարքում ցոյց տալ մի օրինակ, որ իր ներքին բովանդակութեամբ կարողանար հաւասարուել վրացի իշխանի այդ սրտառուչ կտակին։

Մեզանում, ինչպէս ամեն բան, նոյն իսկ բարեգործութիւնն էլ հիմնուած է չհասկնդրութեան սկզբունքի վրայ։ Հայը նուիրում է եկեղեցուն հազարներ, և նրա դիակը թաղուում է եկեղեցու գաւթում, հայը ուսումնարան է կառուցանում, և նրա անունը դրոշմուում է ուսումնարանի ճակատին։ Վրացին խոշոր գումարներ չէ կտակում, և կարողութիւն չունի էլ կտակելու, բայց նա տալիս է մի կտակ, որի բարոյական գինը հարիւր անգամ բարձր է քան տասնեակ և հարիւրաւոր հազարները նուիրողների փքուն կտակներից։ Նա չէ նուիրում իր ունեցածի մի փշրանքը, իր հաւուստ սեղանի մնացորդը, նա տալիս է այն բոլորը, ինչ որ ունէ։ Նա հրաժարուում է իր դագաղը սնոտի զարդերով ծածկելու վերջին փառասիրութիւնից, և կտակում է իրան «թաղել ինչպէս մի ամենաաղքատ չինականի» և իր դագաղի գինը յանձնում է իր մայրենի գրականութեան։ Ահա բուն բարեգործութիւն, ահա այն տուրքը, որի համար Քրիստոս կոչեց. «ահա, այս մուրացիկ կնոջ լուման աւելի է քան թէ հարուստների առատ տուրքը, որովհետև նա տուեց իր բոլոր ունեցածը»։

Բայց աւելի իրատական է այն, որ վրացի իշխանը իր սրտառուչ կտակը անում է օգուտ գրականութեան։ Այս կողմից, ուրեմն, վրացին մի քայլ աւելի է առաջադիմել։ Մի ժամանակ հայերի կտակները գրեթէ բացառապէս լինում էին յօգուտ եկեղեցու և վանքերի, յետոյ, երբ նրանք մի փոքր քաղաքակրթուեցին, հասկացան, որ ժամանակի պահանջները այժմ այլ են, և սկսեցին իրանց նէրները և կտակները ուղղել յօգուտ կրթութեան և ուսումնարանների։ Եւ մինչև այսօր այդ կէտի վրայ մնացել են սառած։ Մինչև այսօր չըգիտէին, որ, բացի եկեղեցուց և ուսումնարանից, կայ և մի ուրիշ տարր, որին պաշտպանելը եթէ ոչ աւելի, գոնէ նոյնքան կարևոր է, որքան կրթութեան գործը և այդ տարրն է գրականութիւնը, որ ամեն ազգի առաջին քաղաքակրթական պարծանքն է։

Գրականութեան օգուտները հասկանալու համար աւելի մտաւոր հասութիւն է հարկաւոր, քան թէ եկեղեցու օգուտները հասկանալու համար, որովհետև գրականութիւնն աւելի նուրբ և ժամանակակից բան է, քան եկեղեցին և դպրոցը։ Սրդեօք մի օր կըհասկանան հայերը գրականութեան բարձր նշանակութիւնը և նրան պաշտպանելու անհրաժեշտ կարևորութիւնը...

Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՐԷԳ-ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, ամսիս 18-ին, տեղի ունեցաւ Տ. Սարգիս քահանայ Րէգ-Նազարեանցի թաղման տխուր հանդէսը։ Նախընթաց օրը երեկոյեան ժամերգութեան նրա մարմինը խուռն բազմութեան ներկայութեամբ տեղափոխել էին Քամոյեանց եկեղեցին։ Քահանայական թաղման պատշաճ արարողութիւններից և պատարագից յետոյ քահանաները դագաղը դուրս բերին եկեղեցուց։ Թիֆլիսի քահանաներից ներկայ էին միայն 24-ը և կոնսիստորիայի նախագահ Համազասպ վարդապետը, որ քարոզ խօսեց։ Թէ եկեղեցում և բակում և թէ փողոցներում խռնուում էր ժողովրդի ահագին բազմութիւն։ Հայր Րէգ-Նազարեանցի նման արժանաւոր հոգևորականի կորուստը շատերին տխրութեամբ համակել էր։

Ժամը 12-ից անց սկսեց յուղարկաւորութիւնը։ Քահանաները մինչև գերեզմանատուն ձեռքերի վրայ տարան դագաղը։ Ներսիսեան դպրոցի աշակերտները, որտեղ հանգուցեալը թէ տեսուչ և թէ կրօնուսոյց է եղել երկար տարիներ, գնում էին յուղարկաւորութեան առաջից. ներկայ էին նախկին Սերպենեի գիմնազիալի աշակերտուհիները իրանց ուսուցիչների և վարժուհիների հետ. դրանք եկել էին իրանց վերջին հրաժեշտ տալու իրանց ուսուցչին և ընկերակցին, որ մինչև վերջերս վարում էր իր պաշտօնը այդ գիմնազիալում։ Պսակները էին դրել հանգուցեալի վրայ 1) Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, 2) նոյն դպրոցի ուսուցչական խումբը, 3) աշակերտները, 4) նախկին Սերպենեի գիմնազիալի ուսուցչական խումբը և

5) նոյն գիմնազիայի աշակերտուհիները։

Մինչև Խոջիվանքի գերեզմանատունն՝ մեծ բազմութիւն հետևում էր յուղարկաւորութեան։ Հանգուցեալը թաղեցաւ Բաֆֆիի շերմից մօտիկ։

Հանգիստ և խաղաղութիւն քո աճիւնին, ուսեալ և աշխատասէր հոգևոր դաստիարակիչ...

գեղարուեստ

ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հայկական ներկայացումները չլկան։ Դեռ դերասանները զանազան նախագծեր են սարքում։ Վրաց ներկայացումներ նոյնպէս չլկան, խօսք է տուել թատրոնական կոմիտեսը դերասանական խմբին մի որոշ նպաստ տալ, եթէ նրանք կարող լինեն ընկերական հիմունքներով առաջ տանել այս տարի ներկայացումները։

Լսում ենք, ու թատերասէրների մի խումբ մտադիր է առաջիկայ ձմրան մի չարք ներկայացումներ տալ, միայն բարեգործական նպատակով։ Կարծէք թէ թատերասէրները եթէ աջակցէին հայ դերասանական խմբին և նրանց հետ մի ամբողջութիւն կազմելով ու չարունակ գէթ չաբաթը մի անգամ կանոնաւոր ներկայացումներ տուէին՝ այդ բարեգործութիւն չէր լինիլ։

Ուրախալի է պ. Ա. Օպօչինինի քաղաքիս կայսերական թատրոնի դիրեկտօր նչանակելը։ Պ. Օպօչինին, լինելով հմուտ թատերասէր, լաւ տեղեակ թատրոնական գործին, երաժշտութեան, մեծ յոյս է տալիս ամենքին, որ թատրոնական գործը Թիֆլիսում կըդրւի ցանկալի բարձրութեան վրայ։

Օպերային ներկայացումները ամսոյս 20-ից սկսել են արդէն։ Խումբը, փոքրիկ բացառութեամբ, կազմւած է անցեալ տարի Խարկովի օպերային դերասաններից։ Խմբի մէջ թէև արտաքոյ կարգի, աչքի ընկնող ձայներ չլկան, սակայն ամբողջութիւնը համարեա փորձւած դերասաններից է կազմւած։

Սեզոնը բացւեց Գլինկիի «Жизнь за Царя» օպերայով։ Մինչև այժմ ներկայացրել են Այիդա, Դէմոն, Ֆաուստ և այսօր ներկայացնում են Նւգենի Օնեգին։

Առաջիկայ տարուց կայսերական թատրոնը լաւ նպաստ է ստանալու կառավարութիւնից, այն պայմանով, որ ամեն տարի օպերա լինի։ Այժմէն իսկ կապելմէյստրի համար առաջարկել են իրանց ծառայութիւնը կայսերական երժշտ. թիֆ. ճիւղի ուսումնարանի դիրեկտօր պ. Կլէնովսկի և ուրիշները։

—

Ա ս տ ր ա խ ա ն ի ց

Թիֆլիսի խմբի դերասանները մէկ մէկ այցելում են և հեռաւոր Աստրախանը։ Երկու չաբաթ կըլինի, որ մեզ մօտ հիւր էր եկել դերասան Պետրոսեանը և ամսիս 4-ին ու 11-ին տւաւ երկու ներկայացում «Ուրիէլ Ակոստա», «Ֆին» և մէկ վոդեւիլ՝ «Արջ» վերնագրով։ Պետրոսեանը իր խաղով թողեց չատ լաւ տպաւորութիւն։ Ամենքը թատրոնից դուրս եկան լաւ տպաւորութեան տակ։ Պետրոսեանն իր խաղով ցոյց տւաւ, որ նա աչխատում է իր դերերի վրայ։ Ցարգելի դերասանը ստացաւ մի պսակ և 100 մանէթ ընծայ։

դպրոցական

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ կազմւած յանձնաժողովը ռէալական ուսումնարանների ծրագիրը փոփոխելու համար արդէն վերջացրել է իր պարապմունքները։ Նոր ծրագրով պէտք է ընդհանուր կրթութիւնը ոյժ տալ։ Մատեմատիկայի, գերմաներէնն լեզւի դասերը կրճատել, աւելացնելով պատմութեան և ֆրանսերէնի դասերը։

—

Կովկասեան ուսումն. շրջանի հոգաբարձւի և քաղաքագլխի մէջ շարունակւում են բանակցութիւնները քաղաքային դպրոցների մասին։ Ինչպէս երևում է, պ. քաղաքագլուխը այդ խընդիրը պիտի զեկուցանէ դումային։

—

Երէկ ս. Էջմիածին ուղևորւեցին պ. պ. Ռ. Մելիք-Ղարագեօզեան և Յ. Թադէոսեան, որ պատգամաւոր են ընտրւած Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնից։ Պ. պ. պատգամաւորները այդ դպրոցի ուսումնական և վարչական մասին զեկուցումն պէտք է տան Վեհափառ Կաթողիկոսին։

—

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտօր Պարսկին իր օգնական Պաւլովին յանձնարարել է քաղաքի հաշւով կառավարւող բոլոր դպրոցները իր հսկողութեան տակ առնել։ Պ. Պաւլով արդէն քաղաքային վարչութիւնից պահանջել է այդ դպրոցներում սովորող աշակերտների դօկումենտները։ Քաղաք. Վարչ. ուսումնար. յանձնաժողովը դեռ չէ յանձնել այդ թղթերը, վճռել է դպրոցներն իր իրաւասութեան տակ պահել։

—

Գէորգեան Ճեմարանում աշակերտների ընդունելութիւնը վերջացած է։ Մանկավարժական ժողովի կարգադրութեամբ ֆրանսերէն լեզւի տեղ այժմ աւանդւում է գերմաներէն՝ երկրորդ դասարանից սկսած։

մաևր լուրեր

—

Անցեալ ձմեռ Թագաւոր-Կայսրը ինֆլուէնցայից բոլորովին բժշկւած չլինելով՝ պրօֆեսոր Զախարինի խորհուրդով Թագուհի Կայսրուհու և

օգոստափառ զաւակների հետ ժամանել է Լիւդիա կազդուրելու։

—

Այսօր, կիրակի, ս. Էջմիածնում եպիսկոպոսական ձեռնադրութիւն է։ Ձեռնադրուողներն են Խորէն վ. Ստեփանէ, Անանիա վ., Մակար վ. Բարխուդարեան և Կիւրեղ վ. Սրապեան։

—

Անցեալ կիրակի սուս ու փուս քաղաքում կատարուել է Դայիանեան ուսումնարանի քառնհինգամեակը։ Ցաւում ենք, որ այս ցանկալի տօնախմբութեան մասին ոչինչ չենք կարող հաղորդել, քանի որ կատարուել է տնավարի, չորս պատի մէջ, առանց կանխաւ յայտարարութեան։ Կրկնում ենք՝ մի՞թէ այդպէս անչուք պիտի անցնէր այդ տօնը։ Մի՞թէ այդ ուսումնարանի վարչութիւնը չըմտածէց իր հարիւրաւոր սաներին դոնէ այդ օրը իմաց չըտալով, որ ժողովուեն այն քաղցրիկ հիմնարկութեան մէջ մի երկու ժամ, տարիներով միմեանց հետ մեծացած ընկերուհիները յիշէին իրանց այդտեղ անցուցած սիրուն օրերը։

—

Թիֆլիսի բարեգործական ընկերութեան նախագահուհի Եւդոկիա Բօրիսովնա Շերեմետեան խնդրում է բոլոր ցանկացողներին այդ ընկերութեան օգտին լինելիք լօտօրէա-ալեգրու համար ուղարկել իրան պալատը իրեղէններ՝ մինչև ամսոյս 29-ը։ Ամենայն իր չնորհակալութեամբ կընդունի։

—

Կ. Պօլսում խօլերը է երևացել և մահեան մի քանի դէպքեր են եղել։

—

Մի չարաթ է արդէն, որ քաղաքում է գտնւում հողաչափային մասի կառավարիչ և արդարագատութեան մինիստրի օգնական Ի. Լ. Դոբրմիկինը։ Թիֆլիսից Բագու, Երևան է գնալու մինիստրի պ. օգնականը և ապա քաղաքս պիտի գայ ու Բաթումով վերադառնայ։

—

Երէկ, երկաթուղու երեկոյեան գնացքով պրօֆեսսօր Անդրէաս Արծրունին ճանապարհ ընկաւ Գերմանիա։

—

Մշակին գրում են Կ. Պօլսից, որ Թուրքաց կառավարութիւնը կարգադրել է Երզրումը ամրացնել։

—

Սեպտեմբերի 1-ին մեծ հանդիսով Նոր-Նախիջևանում բացւեց Եկատերինէ II արձանը և Աղէքսանդր II կայսեր կօլօննայի բացումը։

—

Մոսկուայի վաճառականներն աշխատում են Նիժնի-Նովգորոդի տօնավաճառանոցը տեղափոխել Մոսկուա, որովհետև տօնավաճառանոցի մեծ մասի շրջանառութիւնն այդտեղից է։ Այս մասին ծրագիր է մշակուում ֆինանսների մինիստրին ներկայացնելու համար։

—

Դեր. սրբազան Երեմիա եպիսկոպոսն այցելել է երկրիս կառավարչապետին, նրա օգնականին, իշխան Նահանգապետին։

—

Համառուսական ցուցահանդէսի չէնքերը Նիժնի-Նովգորոդում չինւում են. նրանց վրայ երկու ու կէս միլիօն րուբլի ծախս կըլինի։

—

Հայ գաղթականներին վերաբերեալ՝ յանձնարարութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի՝ արժ. Նահապետ վարդապետը ներկայացել է երկրիս պ. կառավարչապետին։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԼԻԱՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ Ա. Ս. ՆԻՄՕԼՈՎԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Ամսոյս 23-ին, առաւօտեան 9 ժամին արտաքոյ կարգի գնացքով քաղաքս ժամանեց մինիստր Նիմօլովը։ Երկաթուղու կայարանում նրան դիմաւորեցին իշխան Նահանգապետը, պ. քաղաքագլուխը, պ. Կառավարչապետի ադիւտանտը, նրա դիւանատան լիազօրը և ուրիշ հիմնարկութիւններից շատ պաշտօնեաներ։ Կայարանից պ. մինիստրը՝ ուղեկցութեամբ իշխան Նահանգապետի և պ. ոստիկանապետի՝ գնաց կառավարչապետի պալատը, ուր իջևան էին պատրաստել նրա հիւսիսային մասում։ Այդ օրը պ. մինիստրը այցելեց մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչին և երկրիս Կառավարչապետ Շերեմետևին։ Կէս ժամից պ. Կառավարչապետը վերադարձրաւ պ. մինիստրի այցը և հրաւիրեց նախաճաշի։ Երէկ այցելել են մինիստրին քաղաքիս նշանաւոր իշխաններից մի քանիսը, որոնց նոյն օրը փոխադարձ այցելել է և ինքը։

Երէկ, ամսոյս 24-ին, առաւօտեան 9½ ժամից ընդունելութիւն էր նշանակած պալատում։ Այդ օրը ներկայացան քաղաքիս իրաւասուները քաղաքագլխի հետ և խնդրամատոյց եղան քաղաքում պօլիտեխնիկում բանալու համար միջնորդել։

Երէկ պ. մինիստրին ներկայացան նոյնպէս գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի անդամները, յանձնեցին նրան ընկերութեան պատուաւոր անդամի դիպլօմը և հրաւիրեցին ներկայ լինել երէկ երեկոյ կայացած ընկերութեան նիստին և այսօր, կիրակի ի պատիւ նրա տրւելիք ճաշկերոյթին։

Պ. մինիստրը այսօր այցելել է իր լիազօրի դիւանատունը և մասնակցել Փիլօքսերային կոմիտէի նիստին։

Երեկոյեան գիւղատնտեսական ընկերութեան նիստին, որի նա-

խագահը Կովկասի կառավարչապետն է, գեկուցումներ կարդացին սլ. Աղեքսանդր Քալանթարը գիւղատնտեսական ընկերութեան գործունէութեան մասին, սլ. Տաբատինով—փորձնական ագարակների նշանակութեան մասին և սլ. Շաւրով—հազագիւտ բոյսերի մասին։

Պ. մինիստրը դիտաւորութիւն ունի վաղը ճանապարհ ընկնել Բագու։ Ղարաբաղում կրնայէ այնտեղի ագարակը։

Բագուում ի միջի այլոց պ. մինիստրին ներկայանալու է շամախեցիներից մի պատգամաւորութիւն խնդրելով, որ Շամախում կառավարութիւնը մի գիներգործական դպրոց բանայ։

ԻՄԱՍՏՆԵՐ

Պէտք է ունենալ կանոնաւոր մտածող գլուխ և ոչ անկանոն բայց լցած գլուխ։

Մոնտէն

Ուսուցիչը մի հայելի է, որի մէջ աշակերտը նայում է և իրան յարդարում. աշակերտը միշտ և շարունակ ուսումնասիրում է իր ուսուցչին։

Փիլիսոփայութիւնն է բնութեան և կեանքի տւած փաստերից և երևոյթներից հանած մտքերը և եզրակացութիւնները։ Փիլիսոփայութիւնը հետամուտ է ճշմարտութեան։

Նիւթական կեանքը միշտ դիմում է գաղափարականին. մտաւոր կեանքը միշտ կրտիրէ ու կազդէ նիւթական կեանքի վրայ։

Պարզութիւնը, անկեղծութիւնը մեծ ու յաղթող ոյժեր են։

N

Գլխաւորը հոգին է, որ մեր բոլոր գործողութիւնների հիմք է ծառայում։

Ոտանաւորների անգիր սերտողութիւնը կարևոր է աշակերտին հարթ ու ազդու խօսել սովորեցնելու, նրանց դասերն ու դարձուածների պաշարով հարստացնելու, այլև աշակերտներին հեղինակների հետ ծանօթացնելու համար։

Խ. Վ. Ստեփանէ

Մի երկրի աշխարհագրութիւնը նրա պատմութիւնն է։

Ռետոեր

Բնութիւնն է միշտ արուեստի օրինակը և ճաշակի առաջին դպրոցը։

Հայր Ժերար

Անձնուէր և ազնիւ ձայնը, իմացէք, աշխարհիս մէջ զուր հնչելու չէ երբէք։

Պլեչչէև

Գերմանական մարմնամարզական դրօշակի վրայ գրուած է. «Թարմ, պարկեշտ, ուրախ, ազատ»։

Ամեն մի պատմական անցք, հետևանք է նախորդ շատ իրողութիւնների։

N.

Որ հանճարեղն է, գառաջնորդութիւն նա ստացել։

Նախնէք

Ամենայն բանէ մէջ ուղղութիւն տւողը, կառավարիչը, տնօրինութիւն անողը պիտի լինի ամենից ընդունակը և ճարտարը գործի մէջ։

Մ. Միանասեան

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ԱՆԳԼԻԱՑԻ ՊՐՕՖԵՍՕՐՆԵՐԸ ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՄԷՋ

Անգլիացի պրօֆեսօրները մի անգամ ճանապարհորդում էին Աւստրալիայում։ Մի կղզում նրանց պատահեցին սպառազինուած վայրենիները, որոնք զարմացած ակեցին նայել սպիտակամորթ մարդկանց և նրանց հետ ունեցած տախտակեայ արկղներին։ Պրօֆեսօրները շատ քաղցած էին, համաձայնուեցին իրանց համազգեստների դեղին կոճակները փոխել մի քանի ձկների հետ, որոնց վայրենիները բռնել էին։ «Քիչ ժամանակից յետոյ ամեն կողմից, պատմում են ճանապարհորդ պրօֆեսօրները, մեզ շրջապատեցին վայրենիները և սկսեցին քրքրել մեզ հետ ունեցած երեք մեծ տախտակէ արկղները, ուր դասած էին անատոմիայի համար հարկաւոր նիւթեր։ Նրանց զարհուրութիւնն անսահման էր այն ժամանակ,—երբ արկղների մէջ գտան մարդկանց կմախքները, ոտղեղ և մսից շինած տատամքներ։ Նրանք կարծեցին, թէ մենք էլ իրանց պէս մարդակերներ ենք և թագչնում ենք։ Ներեցին նման վրայ ընկած ոսկորներին և ըսկսեցին ախորժակով կրծել։ Յետոյ կրակ վառեցին և մսից ու դեղերից շինած մարդու ստա-

մոքսը խորովեցին—մոմը հալուեց և ուրիշ դեղերի հետ խաշտեցին։ Վայրենիները սրանով չբբաւականացան. գտան սպիրտի մէջ պահած ուղեղ և մեծ ուրախութեամբ այն էլ կերան, իսկ սպիրտը հարբեցրեց նրանց և նրանք վայր թափուեցան։

—

այլ եւ այլք

—

Այս տարի առաջ երկաթուղիների գծերի տարածութիւնը հասնում է 30,340 վերստի։ Վագոնների թիւը երեւելիների համար 6,677 հատ է, ապրանքներինը 141,898։ Տարեկան ընդհանուր մուտք երեւելիներից և ապրանքից 285 միլիոն րուբլի է, ծախս 170 միլիոն, եղիր միլիոն էլ այլ և այլ ծախսեր, տարեկան զուտ եկամուտը 113 միլիոն։

—

Հնդիկաստանում նորերս վախճանուել է միակ հնդիւ-հեղինակ տիկին Սատխանախան։ Սա իր կրթուելիքը առացել էր նախ միսիոներների մօտ, ընդունելով և քրիստոնէութիւն և ապա Մադրասի համալսարանում սովորել էր բժշկական գիտութիւն։ Նշանաւոր են նրա գրուածքներից «Kamala», ուր շատ հինդանի նկարագրում է հնդիկների կենցաղը, վարքբարքը, «Saguna» հոգեբանական բոման, որ և կարծեք թէ իրան հեղինակի կենսագրութիւնը լինի։ Սրա մէջ երեւում է արդի հնդուհին։

—

Թատրոնների և հասարակական զբօսնութիւնների տոմսակները բարեգործական ընկերութիւնը, սահմանած օրից մինչև այժմ, ամսեայ հինգ ամսայ ընթացքում մի միլիոն րուբլուց աւելի է։ Կոմիսաը տուել է 46,582 ր. 58 կոպ։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

НОВЫЙ
ПРАКТИЧЕСКІЙ АНГЛІЙСКІЙ УЧЕБНИКЪ
И
САМОУЧИТЕЛЬ
О. МАКСИМОВОЙ
„ТЕОРІЯ НА ПРАКТИКѢ“.

Изданіе выходитъ выпусками (всего около 40), каждый въ печатный листъ (16 страницъ).
Цѣна на всѣ изданіе 3 руб, съ доставкою и пересылк. 4 руб.
Можно наложеннымъ платежемъ.
Отдѣльные выпуски высылаются за 21 коп. почтовыми марками.

Вышла уже первая часть его съ „Ключемъ“, словаремъ и интереснѣйшей хрестоматіей, состоящей изъ разсказовъ и стихотвореній для самостоятельнаго перевода съ англійскаго языка и одного большаго разсказа (въ 16 страницъ). для письменнаго перевода на основаніи пройденнаго, съ русскаго на англійскій языкъ.

Вышедніе выпуски высылаются и видаются при подпискѣ.

Это—самый польный и занимательный самоучитель, заключающій въ себѣ все нужное для скорѣйшаго и легчайшаго изученія англійскаго языка, какъ то: правилачтенія и произношенія (произношеніе указано русскими буквами). Самодиктантъ. Ключъ, всю граматику, упражненія и пр. Главнымъ образомъ Самоучитель «Теорія на Практикѣ» пріучаетъ говорить, понимать прочитанное и писать. Въ немъ все основано на анекдотахъ, которые ученику приходится обсуждать, такъ что съ перваго урока ученикъ имѣетъ дѣло со связными, осмысленными фразами и чисто разговарнымъ языкомъ. Начиная со второй части Самоучителя, каждый випускъ его имѣетъ литературное приложеніе, приспособленное къ постепенно увеличивающимся знаніямъ ученика и выходящее совершенно отдѣльно отъ Самоучителя. Это одинъ изъ большихъ извѣстнейшихъ и крайне интересныхъ англійскихъ романовъ, вполнѣ доступный даже для дѣтей-подростковъ. Романъ этотъ можетъ быть переплетенъ со своимъ словаремъ совершенно отдѣльно отъ Самоучителя и составитъ очень цѣнный и интересный, во всѣхъ отношеніяхъ, томъ, который въ отдѣльной продаже со словаремъ будетъ стоитъ не менѣе 5 руб.

Вмѣстѣ съ приложеніемъ Самоучитель будетъ содержать не менѣе 60 листовъ. т. и. 900—1000 страницъ

АДРЕСЪ: С.-Петербургъ. Пушкинская ул. д. № 7, кв. № 13. Госпожѣ издательницѣ англійскаго самоучителя „Теорія на практикѣ“, Ольгѣ Ивановнѣ Максимовой.

Катологъ изданій О. Максимовой для полученія иностранныхъ языковъ высилается при требованій БЕЗПЛАТНО. 5—5.

տեղեկատու

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վօրօնցովի պր-
ձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վ՝ բարեւժութեան և վիներական (սիֆիլիս) հիւանդութիւններից։

Կ. Մ. Չիկովանի—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. Բուդկովսկի—10½—11½ ժ. ներքին, երեխայոց և կանանց հ.

Ի. Ֆ. Պրօտասևիչ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ Տուբբովիչ—12½—1 ժ. կանանց հ.

Ա, Պ. Կարապետեան—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Բ. Ե. Նաւասարդեան—7—7½ ժ.

Ի. Ա. Ֆրանցիուս—7—7½ ա-և վերնի վէվմ, դասախօս ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. Գուրկօ քիմի-խոչորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի մէջ և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհուրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և դիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապ. Նաւասարդեան։

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

Նարունակւում է ներկայ թուականի բաժանորդագրութիւնը և բացուած է երկրորդ կիսամեակինը։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. է, կէս տարւանը 2 ր., ՏԱՐԱԶԻՆԸ տարեկան 6 ր., կէս տարւանը 3 ր.։

Նոր բաժանորդը կարող է ստանալ բոլոր լոյս տեսած №№-ը առանց բացառութեան։

Պրէմիաներ ստացող բաժանորդը, բացի բաժանորդագինը՝ պէտք է ուղարկի ԱՂԲԻՒՐԻ *համար 1 ր., ՏԱՐԱԶԻ 4 ր.։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ“ *կամ* „Таразъ“.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՓՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿ. ԽՆԴԻՐՆԵՐ

Ծախւում է յայտնի գրավաճառանոցներում,

Բացու ԱՐՕՐ *տպարանում։ Գինը 1 ր.*

Ազգիս Վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում որպէս ձեռնարկ,

«ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ»

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. Թիֆլիս, Ելիզաւետեան փողոց, տուն № 45։

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև չիսուն գնողներին 55 կ., 3) չիսուն նից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայուած չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ծանապարհածախսը գնողների վրայ է։

25—6

Дозволено ценз. Тифлисъ, 23 августа 1894 г. Типографія Грузинск. Изд. Т-ва Лорисъ-Мелик. ул. № 14.